«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ՀԻՄՆԱԴԻՐ ԽՄԲԱԳԻՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

60-ական թվականները թերևս դիտության, գրականության ու արվեստի, գուցե նաև հասարակական-քաղաքական կյանքի ու կացության զարգացման ու ծավալումի առավել ընդգծված շրջափուլ են ներկայացնում: Ակադեմիական ինստիտուտների մի զգալի մասը այդ տարիներին է կազմավորվել կամ առնվազն՝ ուղղորդել իր հետազոտելիք թեմատիկան: Նույն այդ տարիներից են սկսում իրենց կենսագրությունը ուսումնական ոչ քիչ ֆակուլտետներ:

Հայագիտության բնագավառում տեղի ունեցած փոփոխությունները մի քանի կարգի են. քաղաքական-գաղափարական նեղմտությունն այլևս համատարած չէր, հալածական եղած, բայց կենդանի մնացած գիտնականները աշխատելու և հայրենիքում ապրելու իրավունք էին ստացել, հին շրջանով, մատենագրությամբ զբաղվողները այլևս «կրոնի քարոզիչներ» չէին ընկալվում, ուստի «դասակարգային պայքարը» ոտները վերմակի տակ էր քաշել: Ամենակարևորը՝ գրեթե վերացել էր ամբաստանության և քաղաքական մեղադրանք հորինելու «չնորհով» գիտության մեջ տեղ ապահովելու կարելիությունը և բազում այլ իրողություններ: Հայագետների միջին դարձող սերունդը փորձ էր անում դասականներին շարունակելու հանգրվաններ որոնել, ձերբազատվել նախորդ տասնամյակների հարկադրյալ բեռից, գուցե նաև որոշ մեղքերից: Դրսաշխարհի հետ եղած շփումների հաճախակի դառնալու հետևանքով սկսվել էր բավական լայն գրափոխանակություն, ոչ հազվադեպ նաև՝ գիտական այցելություններ, հայրենիքի ու սփյուռքի միջև եղած ընդհանրության գիտակցում, տեղեկատվություն և, ի հետևանս այս ամենի՝ հայագիտական պատմա-բանասիրական հետազոտությունների կարևորության պետական-պաշտոնական ճանաչում:

Հուժկու այս հոսանքը, այդ թվում և կովկասագիտության ու բյուզանդագիտության ազգային դպրոցների ձևավորումը, բնականաբար, պիտի հանգեցներ ոչ միայն նոր մենագրությունների ու մատենաշարերի, այլ նաև գիտական նոր պարբերականների հրատարակության, որպիսին և դարձավ 1958-ին հիմնված «Պատմա-բանասիրական հանդեսը»: Առաջին իսկ համարի «Խմբագրության կողմից» ներածականում ասված է. «...ինչ-

պես գիտության բոլոր մյուս ճյուղերում, այնպես էլ պատմա-բանասիրական գիտությունների բնագավառում տակավին կան շատ չլուսաբանված պրոբլեմներ, գիտական մանրազնին ուսումնասիրության և արդիականության դիրքերից վերագնահատման կարոտ բազմաթիվ հարցեր, որոնց քննարկմանը և լուծմանը օժանդակելու համար կյանքի է կոչված ներկա պարբերականը: «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում կլուսաբանվեն հայ ժողովրդի պատմության, լեզվի, դրականության, փիլիսոփայության, արվեստի և կուլտուրայի այլ բնագավառների հարցերը և ընդհանրապես հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կապերը մյուս ժողովուրդների հետ»: Միաժամանակ տեղեկացվում էր, թե նորաստեղծ հանդեսը «կունենա գիտական քննարկումների բաժին, որը կօժանդակի ստեղծագործական բանա-

վեճերի ծավալմանը: Նա կունենա նաև ընագրերի հրապարակման, գրախոսությունների, գիտական լուրերի ու տեղեկությունների բաժիններ» (ՊԲՀ, 1958, N 1, էջ 3–4):

Հայագիտական նոր հանդես ստեղծելու անհրաժեշտությունը հիմնավորող գիտնականների մեջ (Ա. Գ. Հովհաննիսյան, Մ. Գ. Ներսիսյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Ս. Տ. Երեմյան, Ա. Ղարիբյան, Կ. Ղաֆադարյան, Լ. Խաչիկյան, Վ. Ռշտունի, Ա. Ղանալանյան, Բ. Առաքելյան, Վ. Զալոյան և այլք) հատկապես կարևոր էր ԳԱ փոխպրեզիդենտ ակադ. Մկրտիչ Ներսիսյանի հատուկ դիրքորոշումն ու ծրագրային նախաձեռնությունը: Մինչ այդ նա անցել էր դերգաղափարականացած միջավայրի փորձությունների միջով, համարձակ ու սկզբունքային գոկտորական պաշտպանել, հանրապետության բարձրագույն ղեկավարությունը ճանաչել ու գնահատել էր նրան, առանց թղթակից-անդամության ակադեմիկոս ընտրել: ԳԱ պրեզիդենտ ակադ. Վ. Հ. Համբարձումյանը դիտեր Մ. Ներսիսյանի կարողությունները, օրինապահության ու սկզբունքի հանդեպ նրա հետևողականությունը, ուստի նոր հանդեսի ծրագրային տարբերակներից նախընտրելի համարեց Մ. Գ. Ներսիսյանի պաշտպանած տարբերակը (ներառյալ անվանումը) և նախագահության նիստով գլխավոր խմբագիր հաստատեց ակադ. Մ. Ներսիսյանին:

Նախանձելի, տեղ-տեղ նույնիսկ անբացատրելի է այն հմտությունն ու նվիրումը, որ չորս տասնամյակ շարունակ «Պատմա-բանասիրական հանդեսի» նկատմամբ ցուցաբերեց նրա անփոփոխ հիմնագիր խմբագիրը: Նախ, հանդեսի աշխատակցության հրավիրեց ներսի ու դրսի, հայագիտ թե օտար շատ կարող հեղինակություններ, որոնց աշխատությունների տպագրությունը գիտական միջազգայնացած սանդղակով է չափվում, ուստի ամենևին զարմանալի չպիտի նկատել այն արձագանքը, որ Վ. Մինորսկու, Հ. Օրբելու, Վ. Բենվենիստի և այլոց մոտ գտան հանդեսի առաջին իսկ համարները: Հետազոտողի ու գիտնական ընթերցողի առանձնաշնորհ կարողությունն էր պետք բազմաճյուղ հայագիտության հիմնական ենթաբաժինները հրապարակումներով ներկայացնելու համար: Մ. Ներսիսյանը չորս տասնամյակ շարունակ հետևում, ճշգրտում ու գտնում էր խմբագրությանն զբաղեցնող հարցի մասնագետին և մասնակից դարձնում հրապարակմանը՝ իբրև հեղինակ կամ գոնե որպես դրախոս: Որքան էլ բազմազբաղ գլխավոր խմբագիրը նյութերի խմբագրական մշակման ընթացքում կարգում էր գրեթե բոլոր հիմնական հոդվածները, իսկ հերթական համարի ազդօրինակն ստանալիս՝ արդեն բոլոր հոդվածները, առկա վրիպումները հաջորդ համարում չկրկնելու համար: Նյութերի համամասնությունը որոշելիս, իբրև կանոն, գործնական նկատառումներին շատ կարևորություն չէր տալիս, ինչպես նաև գիտության երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին չէր զրկում ավագների կամ պաշտոնավոր ընտրյալների դրույթներին առարկելու հնարավորությունից: Առհասարակ Մ. Ներսիսյանը

տպագրվող հեղինակների կարողությունների սահմանը ճանաչող խմբագիր էր, որը խմբագրությունը մղում էր գիտությանը ծառայելուն և ոչ պատահական անձանց, այն էլ ոչ ակադեմիական շրջանակներից, յուրային դարձնելու կամ հովանավորելու այսօր այնքան ընդունված դիտավորությանը:

Իբրե հեռաղոռող Մ. Ներսիսյանը անխնայորեն մերժում էր սիրողականությունը, իմացությունների պակասը լրացնելու նպատակով գիտության հարցերը «հայրենասիրության» դաշտ ներածելու բոլոր դրսևորումները: Հաճախ այս կամ այն հարցի գծով նեղ մասնագետները ընկրկում էին օր-օրի թափ առնող մակերեսայնության կերտողների զորության դիմաց, մինչդեռ Հանդեսի խմբագիրը միշտ և անվերապահ մնում է անդրդվելի: Փորձեք նորից թերթել հայոց կազմավորման, Ուրարտուի պատմության, հայերենի հին ու նոր ուղղագրության, ազգային-ազատագրական կռիվների, ինքնապաշտպանության, իսկադիր վկայությունների դնահատության ե բազում այլ խնդիրների վերաբերյալ Հանդեսի հրապարակումները՝ և կհամոզվեք թե որքան հաստատակամություն, ճշմարիտ գիտականություն ու նվիրում է ցուցաբերել տարեց-տարի գիտությամբ խոնջացող այդ նախկին փարպեցին:

Իր դերակատարման մեջ Մ. Գ. Ներսիսյանը չթերացավ նույնիսկ այն տասնամյակներում, երբ նա միաժամանակ վարում էր ԳԱ փոխպրեզիդենտի, ակադեմիկոս-քարտուղարի, Համալսարանի բազմազբաղ ռեկտորի ու Պատմության ինստիտուտի բաժնի վարիչի պաշտոնները: Ավելին, Հանդեսի խմբագրի և ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահի փորձը նա ազնվագույնս օգտագործեց նաև համալսարանական գիտական կենտրոններ, հանգեսներ, ամբիոններ ու ֆակուլտետներ ստեղծելու հնարավորությունները գործարկելիս: Հ. Աճառյանի «Արմատականի», Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», Մ. Ջամչյանի եռահատորի, Նոր Հայկազյանի, Հայոց մշակութային գործիչների, Մեր անվանի դասախոսների, բազում այլ բառարանների ու մենագրությունների հրատարակության համար հայագիտությունը պարտավորված է «Պատմա-բանասիրական հանդեսի» անխոնջ խմբագիր ակադ. Ակրտիչ Ներսիսյանին:

Անչուշտ հոգնեցուցիչ է քառասուն տարվա ընթացքում շուրջ 150 հատոր խմբագրելը, այդ էլ իբրև լրացուցիչ և, ինչպես այն տարիներին էին ասում՝ գերազանցապես հասարակական կարգով (իմա՛ անվճար): Կարծեմ պարբերականներով այնքան հարուստ հայագիտության պատմության մեջ սա եզակի դեպքերից է: Չեմ կարող ասել, թե բացի հայագիտական ծրագրերը իրականացնելու հնարավորությունից՝ բազմամյա խմբագրությունը ակադ. Ներսիսյանին չէր օժտում այլ բարեմասնություններով: Միշտ սթափ ու զդաստ գիտնականը 90-ամյակի շեմին պահպանեց ամենօրյա դիտական չափումների հնարավորությունը՝ մշտապես ձեռքը օրվա գիտության զարկերակին: Բացառիկ հիշողությունն ու արձագանքի անմիջականու-

թյունը նրան մշտապես պահեցին հայագիտության անաղարտության համար մարտնչող գիտնականների շարքում: Պատահական չէ, որ Մ. Ներսիսյանի վերջին տարիներս գրած աշխատությունները, այդ թվում և Հանդեսի էջերում տպագրվածները, բանադրում են գիտության կեղծարարներին և անձնուրաց հավատավորի կամք ու կարողություն վկայում: Քառասուն տարի Հանդեսը վերընթաց ապրեց, միշտ հարստանալով ու ընդլայնելով իր ընդգրկումը:

Թե ինչ ընթացք կունենա «Պատմա-բանասիրական հանդեսը» ապագայում, գլխավոր խմբագրի ակադ. Մ. Ներսիսյանից հետո, վաղաժամ է կռահել, բայց որ այն օժտված է որոշակի ավանդույթով և տարածք ունի անցնելու՝ անվերապահ է:

Ակադ. Մ. Ներսիսյանի երախտիքը լիովին ճանաչելու համար անհրաժեշտ կլինի հրատարակել Հանդեսի քառասուն տարիների համարների հեղինակային և թեմատիկ մատենագիտություն: ԳԱԱ նախագահության պաշտոնական որոշումն էլ արդեն այդ է պահանջում: Իսկ առայժմ Մկրտիչ Ներսիսյանին վարձատրենք նախնյաց հայտնի ասույթով՝ «հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»: